



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«13» ապրիլի 2012 թ.

թիվ 347-ՇԽ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով կանոնակարգել վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների ոլորտում ստուգաթերթերի միջոցով ստուգումների հետ կապված հարաբերությունները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 12-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից իրականացվող վիճակախաղերի լիցենզավորման պայմանների և պահանջների կատարման ստուգաթերթի կիրառման ուղեցույցը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից իրականացվող շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման պայմանների և պահանջների կատարման ստուգաթերթի կիրառման ուղեցույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ

ՎԱՉԵ ԳԱՐԻԲԵԼՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության

Ֆինանսների նախարարի

2012 թվականի ապրիլի 13 -ի

N 344-Ն հրամանի

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՎԻՃԱԿԱՆԱՂԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՏՈՒՎԱԹԵՐԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|----|---|--|
| 1 | 2 | 4 |
| 1. | Արդյո՞ք, կազմակերպիչը (բացառությամբ տոտալիգատորի կազմակերպման դեպքերի) ապահովել է խաղարկությանը մասնակցող տոմսերի ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումային ֆոնդի (առանց դրանում ներառվող վիճակախաղի տոմսերի արժեքի) ձևավորումն ու մասնակիցների միջև բաշխումը: | Հաշվարկվում է խաղարկությանը մասնակցող տոմսերի ընդհանուր արժեքը, ձևավորված և մասնակիցների միջև բաշխված շահումային ֆոնդի մեծությունը (առանց դրանում ներառվող վիճակախաղի տոմսերի արժեքի) և այդ երկուսի տոկոսային փոխհարաբերակցությունը: |
| 2. | Արդյո՞ք, կազմակերպիչը նախքան վիճակախաղերի վերաբերյալ գովազդների հրապարակումը դրա բովանդակությունը համաձայնեցրել է լիազոր մարմնի հետ: | Կազմակերպչի կողմից հրապարակված գովազդների բովանդակությունը համեմատվում է վիճակախաղի կազմակերպչի կողմից լիազոր մարմնի հետ համաձայնեցված գովազդների բովանդակության հետ: |
| 3. | Արդյո՞ք, կազմակերպիչն իրային շահումների խաղարկման դեպքում վիճակախաղի շահող մասնակցին տեղեկացրել է այդ իրային շահումին համարժեք դրամական չափի մասին և շահողի ցանկությամբ տրամադրել դրամական շահումը: | Ուսումնասիրվում է վիճակախաղի շահող մասնակցի կողմից այդ իրային շահումին համարժեք դրամական չափի մասին տեղեկացված լինելու, ինչպես նաև իր ցանկությամբ դրամական շահումը նախընտրելու հետ կապված համապատասխան փաստաթղթի առկայությունը: |
| 4. | Արդյո՞ք, կազմակերպիչը խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով սահմանված ժամկետներում չպահանջված (չստացված) շահումների չափով ավելացրել է այդ ժամկետի ավարտին հաջորդող հերթական խաղարկության շահումային ֆոնդը: | Ուսումնասիրվում է խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով սահմանված ժամկետներում չպահանջված (չստացված) շահումների չափը և այդ ժամկետի ավարտին հաջորդող հերթական խաղարկության շահումային ֆոնդին ավելացրած չափը: |
| 5. | Արդյո՞ք, կազմակերպիչը շահումի փաստը և արժեքը հրապարակել է միայն շահողի համաձայնությամբ: | Ուսումնասիրվում է շահողի գրավոր համաձայնության առկայությունը շահման փաստի և արժեքի հրապարակման մասին: |
| 6. | Արդյո՞ք, կազմակերպիչը շահողի առաջին իսկ պահանջով տրամադրել է շահումը: | Ուսումնասիրվում են շահումների տրման ձևակերպման ժամկետները, ինչպես նաև շահողների դիմում-բողոքների բովանդակությունները: |
| 7. | Արդյո՞ք, կազմակերպիչը վիճակախաղերի կազմակերպման, տոմսերի իրացման, պատրաստման և (կամ) ներմուծման գործունեություններից բացի չի զբաղվել այլ գործունեությամբ: | Ուսումնասիրվում է գործունեության վերաբերյալ փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում հարցում է կատարվում համապատասխան մարմիններին կամ անձանց: |
| 8. | Արդյո՞ք, կազմակերպիչը վիճակախաղերը կազմակերպել է իր կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան: | Ուսումնասիրվում է վիճակախաղերի կազմակերպման համապատասխանությունը կազմակերպչի կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին: |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|---|---|
| 1 | 2 | 4 |
| 9. | Արդյո՞ք, կազմակերպչի կողմից կազմակերպված վիճակախաղերին չեն մասնակցել մինչև 18 տարեկան անձինք: | Կատարվում են վիճակախաղերի տոմսերի վաճառքի կամ խաղադրույքների ընդունման վայրերի ընտրանքային ուսումնասիրություններ: |
| 10. | Արդյո՞ք, ոչ խաղարկությամբ վիճակախաղի կազմակերպիչը վիճակախաղերի տոմսերի իրացման գործընթացն սկսվելուց հետո յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը թերթում հրապարակել է տվյալ վիճակախաղի արդյունքները՝ նշելով վիճակախաղի անվանումը և տվյալ վիճակախաղի շահած տոմսերի մասին տվյալները՝ ըստ համարների (սերիաների) և շահումների չափերի: | Ուսումնասիրվում է թերթի առկայությունը, ինչպես նաև այդ թերթում հրապարակված վիճակախաղի արդյունքների բովանդակությունը: |
| 11. | Արդյո՞ք, խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի կազմակերպիչը յուրաքանչյուր խաղարկության անցկացումից հետո հնգօրյա ժամկետում թերթում հրապարակել է տվյալ վիճակախաղի խաղարկության արդյունքները՝ նշելով վիճակախաղի անվանումը, խաղարկության համարը և տվյալ վիճակախաղի շահած տոմսերի մասին տվյալները՝ ըստ շահումի փուլերի, տոմսերի համարների (սերիաների) և շահումների չափերի: | Ուսումնասիրվում է թերթի առկայությունը, ինչպես նաև այդ թերթում հրապարակված վիճակախաղի արդյունքների բովանդակությունը: |
| 12. | Արդյո՞ք, խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի դեպքում վիճակախաղի կազմակերպչի կողմից ստեղծված՝ վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման և պահպանման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) մասնակցությամբ վիճակախաղի չիրացված տոմսերը հաշվառվել, մարվել և պահպանվում են հերթական խաղարկությունից առաջ՝ ապահովելով իրացված և մարված տոմսերի վերաբերյալ «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունները ներկայացնելու ժամկետը: | Ուսումնասիրվում են վիճակախաղի կազմակերպչի կողմից ստեղծված՝ վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման և պահպանման հանձնաժողովի կողմից կազմած վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման և պահպանման հետ կապված փաստաթղթերը: |
| 13. | Արդյո՞ք, ոչ խաղարկությամբ վիճակախաղի դեպքում հանձնաժողովի մասնակցությամբ չիրացված տոմսերը հաշվառվել, մարվել և պահպանվել են վիճակախաղի գործունեությունն ավարտելու մասին առնվազն 3000 օրինակ տպաքանակ ունեցող թերթում հայտարարության հրապարակումից հետո մեկ շաբաթվա ընթացքում: | Ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից կազմած վիճակախաղի չիրացված տոմսերը հաշվառման, մարման և պահպանման հետ կապված փաստաթղթերը: |
| 14. | Արդյո՞ք, հանձնաժողովի անդամների կողմից մարվել են չիրացված տոմսերը՝ դալկելով կամ կտրելով դրանց անկյունը՝ այնպես, որ չեն վնասվել տոմսի համարը, սերիան, խաղարկության համարը և խաղարկությանը մասնակցող դաշտերը: | Ուսումնասիրվում են չիրացված տոմսերը: |
| 15. | Արդյո՞ք, հանձնաժողովը կազմել է վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին տեղեկանք՝ առնվազն երկու օրինակից, որտեղ նշված են տվյալ վիճակախաղի անվանումը, խաղարկության համարը, պահպանման ենթակա վիճակախաղի մարված տոմսերը՝ ըստ սերիաների, համարների և դրանց ընդհանուր թվի: | Ուսումնասիրվում է հանձնաժողովի կողմից կազմված վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին առնվազն երկու օրինակից կազմված տեղեկանքի առկայությունը և բովանդակությունը: |
| 16. | Արդյո՞ք, վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին կազմված տեղեկանքն ստորագրվել է հանձնաժողովի առնվազն չորս անդամի կողմից: | Ուսումնասիրվում է վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին կազմված տեղեկանքը: |
| 17. | Արդյո՞ք, վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին տեղեկանքի կազմումից հետո մարված տոմսերը տեղադրվել են հատուկ պարկերում կամ ծանրոցներում և կնքվել կազմակերպչի կնիքով (սրահանկությամբ): | Ուսումնասիրվում են վիճակախաղի մարված տոմսերը հատուկ պարկերում կամ ծանրոցներում տեղադրված լինելը: |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|--|--|
| 1 | 2 | 4 |
| 18. | Արդյո՞ք, կազմակերպիչը վիճակախաղի մարված տոմսերը պահպանել է պահպանման մասին տեղեկանքի կազմման պահից առնվազն մեկ տարի: | Ուսումնասիրվում են վիճակախաղի մարված տոմսերի պահպանման ժամկետները: |
| 19. | Արդյո՞ք, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչները տվյալ ամսվա ընթացքում տոտալիզատորի խաղադրույքների ընդունման կամ անմիջականորեն ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչների թվի կամ ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքերի գրանցված հասցեների ավելացման դեպքում դրա մասին ավելացումից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին ներկայացրել է լրացուցիչ հաշվետվություն կամ տեղեկատվություն: | Ուսումնասիրվում են այդ նոր հասցեներում խաղադրույքների ընդունման ժամկետները: |
| 20. | Արդյո՞ք, կազմակերպչի կողմից լիազոր մարմին ներկայացված տեղեկություններում (հաշվետվություններում) բացակայել են կեղծ տվյալները: | Համադրվում են ներկայացված տեղեկությունների (հաշվետվությունների) տվյալները փաստացի առկա տվյալների հետ: |
| 21. | Արդյո՞ք, կազմակերպիչը լիցենզիա ստանալու համար հայտը ներկայացնելիս կամ դրանից հետո՝ մինչև լիցենզիան ստանալու պահը չի խեղաթյուրել պահանջվող տեղեկությունները կամ չի ներկայացրել ոչ լիարժեք տեղեկություններ, որոնց ճիշտ կամ լիարժեք ներկայացնելը կհանգեցներ լիցենզիա ստանալու մասին հայտի մերժմանը: | Համադրվում են հայտին կից ներկայացված տվյալները կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալների հետ կամ կասկածի առկայության դեպքում տվյալների իսկությունը ճշգրտելու նպատակով հարցում կատարում այդ տվյալները տրամադրող մարմիններին: |
| 22. | Արդյո՞ք, կազմակերպիչը, լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող փոփոխություն կատարելիս, սահմանված ժամկետում տեղեկացրել է լիազոր մարմնին: | Համադրվում են լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող տվյալները վիճակախաղի կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալների հետ կամ կասկածի առկայության դեպքում հարցում կատարում այդ տվյալները տրամադրող մարմիններին: |
| 23. | Արդյո՞ք, կազմակերպիչը չի կատարել 50 միլիոն դրամը գերազանցող անշարժ գույքի հետ կապված գործարքներ: | Ուսումնասիրվում են կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալները կամ կասկածի առկայության դեպքում հարցում կատարում համապատասխան մարմիններին: |
| 24. | Արդյո՞ք, կազմակերպիչն իրականացրել է 20 միլիոն դրամը գերազանցող գործարք (հաճախորդին տրամադրել է 20 միլիոն դրամը գերազանցող շահում կամ 1 միլիոն դրամը գերազանցող շահումին 24 ժամվա ընթացքում հաջորդաձև շահումների հանրագումարը գերազանցել է 20 միլիոն դրամը), որի գծով ներկայացվել է պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն: | Ուսումնասիրվում են տրամադրված շահումների մեծությունը և պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվության առկայությունը: |
| 25. | Արդյո՞ք, կազմակերպիչը պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունները ներկայացրել է լիազոր մարմնի սահմանած ձևով, կարգով և ժամկետում: | Ուսումնասիրվում են պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունների ներկայացման ձևը, կարգը և ժամկետները: |
| 26. | Արդյո՞ք, կազմակերպիչը 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելու դեպքում իրականացրել է հաճախորդի, նրա անունից հանդես եկող լիազորված անձի կամ իրական շահառուի պատշաճ ուսումնասիրություն (օրինակ, պահանջվել է անձնագիր): | Ուսումնասիրվում է 1 միլիոն դրամը գերազանցող գործարքի հետ կապված հաճախորդի, նրա անունից հանդես եկող լիազորված անձի կամ իրական շահառուի մասին պահանջվող տվյալների առկայությունը: |
| 27. | Արդյո՞ք, կազմակերպիչն իր կողմից սահմանված պարբերականությամբ թարմացրել է որևէ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման արդյունքում ստացված նույնականացման տվյալները: | Ուսումնասիրվում են հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման արդյունքում ստացված նույնականացման տվյալների թարմացման պարբերականությունը: |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|--|---|
| 1 | 2 | 4 |
| 28. | Արդյո՞ք, կազմակերպիչն անբավարար ՓԼ/ԱՖ համակարգ ունեցող երկրի քաղաքացու հետ 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելիս իրականացրել է հավելյալ ուսումնասիրություն (օրինակ, գործարքների համադրում, իրական նպատակի պարզում, ամբողջական պատկերի ստացում և այլն): | Ուսումնասիրվում են հաճախորդի քաղաքացիությունը և հավելյալ ուսումնասիրություն իրականացված լինելը: |
| 29. | Արդյո՞ք, հաճախորդի հետ գործարար հարաբերության ավարտից հետո կազմակերպիչն առնվազն 5 տարի ժամկետով պահպանում է հաճախորդի նույնականացման և նրա հետ իրականացրած 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների տվյալները: | Ուսումնասիրվում են հաճախորդի նույնականացման և նրա հետ իրականացրած 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների տվյալների պահպանման ժամկետները: |
| 30. | Արդյո՞ք, 10-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպիչն ունի ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորող ներքին իրավական ակտ, որն առնվազն ներառում է պատշաճ և հավելյալ ուսումնասիրության կանոնները, տեղեկատվության պահպանման կարգը, ներքին աուդիտի և ներքին դիտարկումների մարմնի աշխատանքները, աշխատողների ընդունման և վերապատրաստման պայմանները, կասկածելի գործարքների ներքին չափանիշները, կասկածելի գործարքի կասեցման և ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման ընթացակարգերը: | Պարզվում է կազմակերպիչի աշխատողների թվաքանակը և 10-ից ավել աշխատող ունենալու դեպքում կազմակերպիչի կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորող ներքին իրավական ակտի առկայությունը, ինչպես նաև այդ ակտի բովանդակությունը: |
| 31. | Արդյո՞ք, կազմակերպիչի որևէ ներքին իրավական ակտի (օրինակ, ներքին կարգ, հրաման, հրահանգ և այլն) հիման վրա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին գործառույթը վերապահվել է կազմակերպիչի որևէ աշխատողի, ստորաբաժանմանը կամ համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձի կամ կազմակերպությանը: | Պարզվում է ներքին իրավական ակտի առկայությունը, որի հիման վրա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին գործառույթը վերապահվել է կազմակերպիչի որևէ աշխատողի, ստորաբաժանմանը կամ համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձի կամ կազմակերպությանը: |
| 32. | Արդյո՞ք, կազմակերպիչի ներքին դիտարկումների մարմինն առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կազմակերպիչի, վերջինիս ստորաբաժանումների և աշխատողների գործունեությունը՝ օրենսդրական, ենթաօրենսդրական և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: | Ուսումնասիրվում է կազմակերպիչի ներքին դիտարկումների մարմնի կողմից ներկայացված հաշվետվությունների հաճախականությունը: |
| 33. | Արդյո՞ք, ներքին դիտարկումների մարմնի կողմից իրականացված ուսումնասիրություններն ամփոփվում են հաշվետվություններով և տրամադրվում կազմակերպիչի կառավարման բարձրագույն մարմնին: | Պարզվում է կազմակերպիչի ներքին դիտարկումների մարմնի կողմից ներկայացված հաշվետվությունների առկայությունը: |
| 34. | Արդյո՞ք, կազմակերպիչի որևէ ներքին իրավական ակտի հիման վրա ներքին դիտարկումների մարմինն ստացել է ավագ ղեկավարության կարգավիճակ և անհրաժեշտ անկախություն, և առկա չեն նշված որակները կաշկանդող խոչընդոտներ: | Ուսումնասիրվում է կազմակերպիչի ներքին դիտարկումների մարմնի գործունեությունը: |
| 35. | Արդյո՞ք, կազմակերպիչը, 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելիս, նույնականացրել է հաճախորդին: | Ուսումնասիրվում են 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների իրականացման ժամանակ ձեռք բերված հաճախորդի նույնականացման տվյալները: |
| 36. | Արդյո՞ք, ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության պարագայում կազմակերպիչը մերժել է գործարքի իրականացումը: | Համադրվում են առկա կասկածները և իրականացված գործարքները: |
| 37. | Արդյո՞ք, կազմակերպիչը սառեցման մասին որոշում ընդունելու դեպքում դրա մասին լիազոր մարմին | Համադրվում են սառեցման մասին որոշումները և լիազոր մարմնի ներկայացված |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|----|---|-----------------------------|
| 1 | 2 | 4 |
| | անմիջապես ներկայացրել է կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն: | հաշվետվությունները: |

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարի

2012 թվականի ապրիլի 13 -ի

№ 344-Ն հրամանի

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՏՈՒԳԱԹԵՐԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|--|--|
| 1 | 2 | 4 |
| 1. | Արդյո՞ք, կազմակերպիչն իր ցուցանակներում օգտագործում է «խաղատուն» բառը, դրա ածանցյալները կամ թարգմանությունները: | Ուսումնասիրվում են կազմակերպչի ցուցանակների բովանդակությունը: |
| 2. | Արդյո՞ք, խաղային ավտոմատի շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը 86 տոկոսից ցածր է: | Ուսումնասիրվում են խաղային ավտոմատների շահումների ծրագրավորված մեծությունները: |
| 3. | Արդյո՞ք, կազմակերպիչը գործունեությունն իրականացնում է լիցենզիայում նշված վայրում (հասցեում): | Համադրվում է փաստացի վայրի տվյալները լիցենզավորման անհատական փաթեթում առկա անշարժ գույքի կադաստրի կողմից տրված համապատասխան վկայականի տվյալների հետ: |
| 4. | Արդյո՞ք, կազմակերպիչն ապահովել է խաղասրահի տարածքի դրսից դեպի ներս անտեսանելիությունը: | Ուսումնասիրվում են դրսից խաղասրահի ներսը երևալու հնարավորությունը: |
| 5. | Արդյո՞ք, կազմակերպիչն ապահովել է խաղասրահի տարածքի պաշտպանությունը պահպանիչ ազդարարման համակարգով: | Ուսումնասիրվում են պահպանիչ ազդարարման համակարգի առկայությունը և աշխատանքը: |
| 6. | Արդյո՞ք, կազմակերպիչն ապահովել է խաղասրահի տարածքի պաշտպանությունը հակահրդեհային ազդարարման համակարգով: | Ուսումնասիրվում են հակահրդեհային ազդարարման համակարգի առկայությունը և աշխատանքը: |
| 7. | Արդյո՞ք, խաղասրահում բացակայել են մինչև քսանմեկ տարեկան ֆիզիկական անձինք: | Կասկածի առկայության դեպքում պահանջվում է անձը հաստատող փաստաթուղթ: |
| 8. | Արդյո՞ք, կազմակերպիչը, պատահականությամբ չպայմանավորված շահումներով խաղեր կազմակերպելիս, խաղացողներին (այսուհետ՝ խաղացող) նախօրոք տեղեկացնում և բացատրում է դրանց մասին: | Ընտրանքային կարգով խաղացողներից հարցում է կատարվում: |
| 9. | Արդյո՞ք, կազմակերպիչը խաղացողի առաջին իսկ պահանջի դեպքում տրամադրում է շահումը: | Ուսումնասիրվում է շահման տրամադրման ժամկետները: |
| 10. | Արդյո՞ք, կազմակերպիչը խաղասրահում իրականացնում է խաղանիշերի (ժետոններ) փոխանակումը միայն կանխիկ դրամով, բանկային քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային փաստաթղթերով: | Ուսումնասիրվում է խաղանիշերի (ժետոններ) փոխանակման ընթացակարգը: |
| 11. | Արդյո՞ք, կազմակերպիչը խաղասրահում կազմակերպվող | Պարզվում խաղասրահի տեսանելի տեղում |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|--|--|
| 1 | 2 | 4 |
| | շահումով խաղերի կանոնները փակցրել է խաղասրահի տեսանելի տեղում: | շահումով խաղերի կանոնները փակցված լինելու փաստը: |
| 12. | Արդյո՞ք, կազմակերպիչը շահումով խաղերը կազմակերպում և անցկացնում է իր կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան: | Ուսումնասիրվում է շահումով խաղերի կազմակերպման համապատասխանությունը կազմակերպչի կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին: |
| 13. | Արդյո՞ք, կազմակերպիչն առանց լիազոր մարմնին տեղեկացնելու չի փոփոխել լիցենզավորման կարգով սահմանված լիցենզիա ստանալու համար ներկայացված տվյալներից մեկը (բացառությամբ «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված պահանջների): | Համադրվում են լիցենզավորման կարգով սահմանված լիցենզիա ստանալու համար ներկայացված տվյալների փաստացի խաղասրահում առկա տվյալների հետ: |
| 14. | Արդյո՞ք, կազմակերպչի կողմից լիազոր մարմնին ներկայացված տեղեկություններում (հաշվետվություններում) բացակայել են կեղծ տվյալները: | Համադրվում են ներկայացված տեղեկությունների (հաշվետվությունների) տվյալները փաստացի առկա տվյալների հետ: |
| 15. | Արդյո՞ք, կազմակերպիչը, լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող փոփոխություն կատարելիս, սահմանված ժամկետում տեղեկացրել է լիազոր մարմնին: | Համադրվում են լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող տվյալները կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալների հետ կամ կասկածի առկայության դեպքում հարցում կատարում այդ տվյալները տրամադրող մարմիններին: |
| 16. | Արդյո՞ք, կազմակերպիչը լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում չի ներկայացրել լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն: | Համադրվում են հայտին կից ներկայացված տվյալները կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալների հետ կամ կասկածի առկայության դեպքում տվյալների իսկությունը ճշգրտելու նպատակով հարցում կատարում այդ տվյալները տրամադրող մարմիններին: |
| 17. | Արդյո՞ք, կազմակերպիչը չի կատարել 50 միլիոն դրամը գերազանցող անշարժ գույքի հետ կապված գործարքներ: | Ուսումնասիրվում են կազմակերպչի մոտ փաստացի առկա տվյալները կամ կասկածի առկայության դեպքում հարցում կատարում համապատասխան մարմիններին: |
| 18. | Արդյո՞ք, կազմակերպիչն իրականացրել է 20 միլիոն դրամը գերազանցող գործարք (հաճախորդին վաճառել է 20 միլիոն դրամը գերազանցող խաղանիշեր կամ 1 միլիոն դրամը գերազանցող վաճառքից հետո 24 ժամվա ընթացքում վաճառել է 20 միլիոն դրամի հանրագումարը գերազանցող խաղանիշեր կամ հաճախորդին տրամադրել է 20 միլիոն դրամը գերազանցող շահում կամ 1 միլիոն դրամը գերազանցող շահումին 24 ժամվա ընթացքում հաջորդած շահումների հանրագումարը գերազանցել է 20 միլիոն դրամը), որի գծով ներկայացվել է պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն: | Ուսումնասիրվում են տրամադրված գնված խաղանիշերի, շահումների մեծությունը և պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվության առկայությունը: |
| 19. | Արդյո՞ք, կազմակերպիչը պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունները ներկայացրել է լիազոր մարմնի սահմանած ձևով, կարգով և ժամկետում: | Ուսումնասիրվում են պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունների ներկայացման ձևը, կարգը և ժամկետները: |
| 20. | Արդյո՞ք, կազմակերպիչը 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելու դեպքում իրականացրել է հաճախորդի, նրա անունից հանդես եկող լիազորված անձի կամ իրական շահառուի պատշաճ ուսումնասիրություն (օրինակ, պահանջվել է անձնագիր): | Ուսումնասիրվում է 1 միլիոն դրամը գերազանցող գործարքի հետ կապված հաճախորդի, նրա անունից հանդես եկող լիազորված անձի կամ իրական շահառուի մասին պահանջվող տվյալների առկայությունը: |
| 21. | Արդյո՞ք, կազմակերպիչն իր կողմից սահմանված պարբերականությամբ թարմացրել է որևէ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման արդյունքում ստացված նույնականացման տվյալները: | Ուսումնասիրվում են հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման արդյունքում ստացված նույնականացման տվյալների թարմացման պարբերականությունը: |
| 22. | Արդյո՞ք, կազմակերպիչը, անբավարար ՓԼ/ԱՖ | Ուսումնասիրվում են հաճախորդի |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|-----|--|--|
| 1 | 2 | 4 |
| | համակարգ ունեցող երկրի քաղաքացու հետ 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելիս, իրականացրել է հավելյալ ուսումնասիրություն (օրինակ, գործարքների համադրում, իրական նպատակի պարզում, ամբողջական պատկերի ստացում և այլն): | քաղաքացիությունը և հավելյալ ուսումնասիրություն իրականացված լինելը: |
| 23. | Արդյո՞ք, հաճախորդի հետ գործարար հարաբերության ավարտից հետո կազմակերպիչն առնվազն 5 տարի ժամկետով պահպանում է հաճախորդի նույնականացման և նրա հետ իրականացրած՝ 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների տվյալները: | Ուսումնասիրվում են հաճախորդի նույնականացման և նրա հետ իրականացրած 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների տվյալների պահպանման ժամկետները: |
| 24. | Արդյո՞ք, 10-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպիչն ունի ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորող ներքին իրավական ակտ, որն առնվազն ներառում է պատշաճ և հավելյալ ուսումնասիրության կանոնները, տեղեկատվության պահպանման կարգը, ներքին աուդիտի և ներքին դիտարկումների մարմնի աշխատանքները, աշխատողների ընդունման և վերապատրաստման պայմանները, կասկածելի գործարքների ներքին չափանիշները, կասկածելի գործարքի կասեցման և ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման ընթացակարգերը: | Պարզվում է կազմակերպչի աշխատողների թվաքանակը և 10-ից ավել աշխատող ունենալու դեպքում կազմակերպչի կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորող ներքին իրավական ակտի առկայությունը, ինչպես նաև այդ ակտի բովանդակությունը: |
| 25. | Արդյո՞ք, կազմակերպչի որևէ ներքին իրավական ակտի (օրինակ, ներքին կարգ, հրաման, հրահանգ և այլն) հիման վրա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին գործառույթը վերապահվել է կազմակերպչի որևէ աշխատողի, ստորաբաժանմանը կամ համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձի կամ կազմակերպությանը: | Պարզվում է ներքին իրավական ակտի առկայությունը, որի հիման վրա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին գործառույթը վերապահվել է կազմակերպչի որևէ աշխատողի, ստորաբաժանմանը կամ համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձի կամ կազմակերպությանը: |
| 26. | Արդյո՞ք, կազմակերպչի ներքին դիտարկումների մարմինն առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կազմակերպչի, վերջինիս ստորաբաժանումների և աշխատողների գործունեությունը՝ օրենսդրական, ենթաօրենսդրական և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: | Ուսումնասիրվում է կազմակերպչի ներքին դիտարկումների մարմնի կողմից ներկայացված հաշվետվությունների հաճախականությունը: |
| 27. | Արդյո՞ք, ներքին դիտարկումների մարմնի կողմից իրականացված ուսումնասիրություններն ամփոփվում են հաշվետվություններով և տրամադրվում կազմակերպչի կառավարման բարձրագույն մարմնին: | Պարզվում է կազմակերպչի ներքին դիտարկումների մարմնի կողմից ներկայացված հաշվետվությունների առկայությունը: |
| 28. | Արդյո՞ք, կազմակերպչի որևէ ներքին իրավական ակտի հիման վրա ներքին դիտարկումների մարմինն ստացել է ավագ ղեկավարության կարգավիճակ և անհրաժեշտ անկախություն, և առկա չեն նշված որակները կաշկանդող խոչընդոտներ: | Ուսումնասիրվում է կազմակերպչի ներքին դիտարկումների մարմնի գործունեությունը: |
| 29. | Արդյո՞ք, կազմակերպիչը, 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելիս, նույնականացրել է հաճախորդին: | Ուսումնասիրվում են 1 միլիոն դրամը գերազանցող գործարքների իրականացման ժամանակ ձեռք բերված հաճախորդի նույնականացման տվյալները: |
| 30. | Արդյո՞ք, ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության պարագայում կազմակերպիչը մերժել է գործարքի իրականացումը: | Համադրվում են առկա կասկածները և իրականացված գործարքները: |
| 31. | Արդյո՞ք, կազմակերպիչը սառեցման մասին որոշում ընդունելու դեպքում դրա մասին լիազոր մարմին | Համադրվում են սառեցման մասին որոշումները և լիազոր մարմին ներկայացված |

| NN | Հարցը | Պատասխանի լրացման ուղեցույց |
|----|---|-----------------------------|
| 1 | 2 | 4 |
| | անմիջապես ներկայացրել է կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն: | հաշվետվությունները: |